ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 օգոստոսի 2024 թվականի N 1293-Ա

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ, ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ (ԲՏՃՄ) ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԵՎ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԲՈՒՀԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 7-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 23-ի N 383-Ն որոշմամբ սահմանված կարգի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2024 թվականի ամառային զորակոչից մինչև ուսումնառության ավարտը՝ 2028 թվականի ամառային զորակոչը, տարկետում տալ բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական և մաթեմատիկական (ԲՏՃՄ) ուղղություններով (այսուհետ՝ ԲՏՃՄ) պետության համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով՝ բակալավրի (դիպլոմավորված մասնագետի, ինտեգրացված) կրթական ծրագրով սովորող քաղաքացիներին՝ համաձայն հավելվածի:

2. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2024 թվականի ամառային զորակոչից մինչև ուսումնառության ավարտը՝ 2026 թվականի ամառային զորակոչը, տարկետում տալ մագիստրոսի կրթական ծրագրով սովորող Գրիշա Արմենի Մարտիրոսյանին (ծնվ.՝ 22.07.2002 թ., հաշվառման վայրը՝ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, թ. Վանատուր 4/2, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, Ավիացիոն և հրթիռային տեխնիկա մասնագիտությամբ):

3. Սահմանել, որ՝

1) սույն որոշման հավելվածում ներառված 18 տարին չլրացած քաղաքացի-ների մասով սույն որոշումն ուժի մեջ է մտնում նրանց 18 տարին լրանալուց հետո.

2) այլ հիմքով տարկետում ստացած՝ սույն որոշման հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետով Արտուշ Կարենի Սեդրակյանի (ծնված՝ 22.04.2006 թ.), 11-րդ ենթա-կետով Հովհաննես Խաչիկի Նարգիզյանի (ծնված՝ 10.06.2006 թ.), 32-րդ ենթա-կետով Վլադիմիր Սամվելի Գրիգորյանի (ծնված՝ 01.01.2006 թ.), 37-րդ ենթակետով Արա Սեյրանի Հասրաթյանի (ծնված՝ 16.03.2006 թ.), 41-րդ ենթակետով Արսեն Արտակի Ասատրյանի (ծնված՝ 03.01.2006 թ.), 45-րդ ենթակետով Գարիկ Հովհաննեսի Միրաքյանի (ծնված՝ 28.03.2006 թ.), 55-րդ ենթակետով Վահան Նարեկի Կնյազյանի (ծնված՝ 09.06.2006 թ.), 81-րդ ենթակետով Արտավազդ Արմենի Արաբաչյանի (ծնված՝ 14.03.2006 թ.), 84-րդ ենթակետով Էմին Համլետի Ալոյանի (ծնված՝ 09.10.2005 թ.), 85-րդ ենթակետով Հակոբ Էդգարի Գրիգորյանի (ծնված՝ 26.11.2006 թ.), 88-րդ ենթակետով Արսեն Արտակի Բաղալյանի (ծնված՝ 05.01.2006 թ.), 91-րդ ենթակետով Արսեն Ֆելիքսի Ղարագյոզյանի (ծնված՝ 03.12.2005 թ.), 93-րդ ենթակետով Արտավազդ Դավիթի Խաչատրյանի (ծնված՝ 13.06.2006 թ.) և 107-րդ ենթակետով՝ Արթուր Արտակի Սարգսյանի (ծնված՝ 29.01.2005 թ.) մասով սույն որոշմամբ նախատեսված տարկետումներն ուժի մեջ են մտնում նրանց այլ հիմքով տրված տարկետումները դադարելու օրվանից.

3) սույն որոշման 2-րդ կետում և հավելվածում նշված քաղաքացիների համար սույն որոշմամբ տրված տարկետումներն ուժի մեջ են մտնում մինչև 2024 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ իրենց զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատներ ներկայացված՝ համապատասխան կրթական

ծրագրով ուսումնառության ընդունվելու (հրամանագրվելու) վերաբերյալ ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանքի հիման վրա:

4. Սույն որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված պահանջները չկատարելու դեպքում՝ սովորողները համարվում են սույն որոշման շրջանակներում տարկետման իրավունք չունեցող և ենթակա են պարտադիր զինվորական ծառայության՝ հայտարարված 2024 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

15.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ